ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

Քանաքեռի կարի ֆաբրիկա ՍՊԸ-ն ՀՀ ԱԱԾ-ՏՆՏՎ-ԷԱՃԱՊՁԲ-25/3-ՀԱՆԴԵՐՁԱՆՔ ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի		
	ֆիրմային անվանումը	արտադրողի անվանումը	տեխնիկական բնութագիրը
1	կիսավերարկու	Քանաքեռի կարի ֆաբրիկա ՍՊԸ	Կիսավերարկու՝ մորթե օձիքով, ներկայացուցչական, կանացի (Կիսավերարկու՝ կիսաբրդյա, կանացի) Կիսավերարկուն կարվում 34181 արտիկուլի կիսաբրդյա մուգ փիրուզականաչավուն գույնի 330 գրամ 1մ2 մակերեսային խտությամբ, 45% բրդի և 55% պոլիէսթերի բաղադրությամբ, անջրանցիկ նյութով ներծծված գործվածքից: Գործվացքի բաղադրությունը՝ համաձայն ԳՈՍՏ 4659-79, ԻՍՕ 1833-2001, մակերեսային խտությունը՝ համաձայն ԳՈՍՏ 3811-72, ներկի կայունությունը՝ լվացման,թորած ջրի, քրտնքի և չոր շփման նկատմամբ, համաձայն ԳՈՍՏ 9733-83, նվազագույնը 4 բալ: Կիսավերարկուն կազմված է կենտրոնական կոճկվող լանջափեշերից, մեջքից, ծալվող օձիքից և թևքերից: Օձիքը հանովի է, կարված է արհեստական մորթուց՝ 1100-1200 գրամից ոչ պակաս մակերեսային խտությամբ մուգ մոխրագույն արհեստական մորթուց, մորթախավի բարձրությունը 10-13մմ: Ձևվածքն ուղիղ ուրվագծով, տալիայի ընդգծմամբ, կրծքամասին սեղմոններով (վիտիժկաներ), հետին փեշը՝ կենտրոնական ճեղքով (պրոռեխ), կոճկվում է 5 հատ դեղնականաչավուն գույնի կոճակ

			օղակներով, մշակված գաղտնի եզրաշերտի վրա: Լանջափեշերի վրա կողքերից ներկարված թեք գրպաններ, օձիքի միացման կարում մշակվում է կախիչ: Թևքերը երկկարանի ներկարված: Կիսավերարկույի և թևքերի եզրերը ծալված և վրակարված: Ձախ լանջափեշին ներսից մշակվում է կտրվածքով ծոցագրպան, որը կոճկվում է 1 պլաստմասե կոճակով և օղակով, ներսի կողմից կարվում է արտադրաքի չափս-հասակի ստուգիչ պիտակ: Գոտկատեղի կողքերին կարված է 4 գոտեմակող: Ունի նույն կտորից պատրաստված գոտի, պլաստմասե ճարմանդով և 1 անշարժ և 1 շարժական գոտու օղակներով: Տաք ներդիրը պատրաստված է 240գ/մ2 մակերեսային խտությամբ սինտեպոնից, մզդակարված, թևքերը՝ 120գ/մ2 մակերեսային խտությամբ մզդակարված սինտեպոնից: Օձիքից մինչև գոտկատեղ ներդիրը երկտակ է: Կիսավերարկուի աստառը՝ մետաքսյա փայլով մուգ կանաչավուն գույնի 70-90գ/մ2 արհեստական գործվածքից, որը մզդակված է սինտեպոնի շերտով, 10*10սմ շեղանկյուն կարերով: Կիսավերարկուի օձիքին կոճկվում է լրացուցիչ մորթե օձիք, աստառով և երկշերտ ներդիրով: Օձիքը կոճկվում է լրացուցիչ շերտին մշակված 5 օղակներով և կիսավերարկուին կարված 5 հատ 14մմ-անոց կոճակներով: Կիսավերարկուի կոճակները՝ լանջափեշերին 18մմ, օձիքին և ծոցագրպանին 14մմ տրամագծով, պատրաստված ջերմադիմացկուն /չհալվող/ նյութից, 4 կարանցքներով, եզրերը թեք անկյան տակ երկկողմանի հղկված, երկկողմանի կարվող, գույնը՝ մուգ դեղնականաչավուն կամ մուգ դարչնագույն: Արտաքին տեսքը՝ համաձայն հաստատված նմուշի: Մինչ արտադրվելը, Պատասխանատու ստորաբաժանում է ներկայացվում 2 հատ նմուշ 46/3 և 54/2 չափսերի, արտաքին տեսքի և չափումների հմապատասխանությունը ստուգելու համար: Արտադրվում են 44/2 մինչև 60/5 չափս-հասակի: Ապրանքը պետք լինի պիտակավորված, պիտակի վրա պետք է նշված լինի տեսականու անվանումը, չափսը, արտադրող կազմակերպության անվանումը, արտադրման տարեթիվը: Փաթեթավորումը՝ եռաշերտ ստվարաթղթե արկղերով, արկղերի մեջ 5 հատ,

			տեսականին պոլիէթիլենային թափանցիկ պարկերով, 1 պարկի մեջ՝ 1 հատ: Արկղերի չափսերը պետք է համապատասխանեն կիսավերարկուի չափսերին, որպեսզի կիսավերարկուն չճմրթվի: Արկղերը՝ պիտակավորված, պիտակների վրա պետք է նշված լինի տեսականու անվանումը, քանակը, չափսերը, արտադրող կազմակերպության անվանումը, արտադրման ամիսը և տարեթիվը:

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

ООО Канакери кари фабрика в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՀՀ ԱԱԾ-ՏՆՏԿ-ԷԱՃԱՊՁԲ-25/3-ՀԱՆԴԵՐՁԱՆՔ ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар		
	фирменное наименование	наименование производителя	технические характеристики
1			